Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է աշխատանքային գործունեության ընթացքում առաջացած խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մարտի 02-ի թիվ 16-Ն հրամանը «Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով» նախադպրոցական ուսումնական հաստատության տարակարգ ստացած 4 մանկավարժի համար պետական բյուջեից ստացվելու է 1 341,6 հազար դրամ ընթացիկ դրամաշնորհ, որն անհրաժեշտ է ներառել բյուջեի եկամտային և ծախսային մասերում:

ՀԾ-հաշվապահ՝ նոր սերնդի հաշվապահական համակարգում ներդրումային տվյալների բեռնման, ֆինանսական հաշվետվությունների արտահանման, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 2 000,0 հազար դրամ:

Համակարգչային ծառայությունների բարելավման, ինչպես նաև պահեստի շրջանառությունը ՀԾ-հաշվապահ ծրագրով վարելու համար անհրաժեշտ է համակարգչային ծառայությունների համար նախատեսված միջոցներն ավելացնել 920,0 հազար դրամով:

Կանաչապատման սեզոնով պայմանավորված ծառատունկ կազմակերպելու համար անհրաժեշտ է «Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին տրամադրել լրացուցիչ 5 000,0 հազար դրամ սուբսիդիա նշված աշխատանքներն իրականացնելու համար:

Մասիս համայնքում ստեղծվել է արտակարգ իրավիճակների արձագանքման կենտրոն, որի աշխատակիցների տեղաշարժը ցանկացած վայր՝ անկախ եղանակային պայմաններից, ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել բաց բեռնախցիկով ամենագնաց մեքենա, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 12 000,0 հազար դրամ գումար:

Նորաբաց և Հայանիստ բնակավայրերում ճանապարհներին առկա տեսախցիկների նորոգման, ինչպես նաև նոր տեսախցիկների տեղադրման, ընդհանուր գործող ցանցին միացման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 1 430,0 հազար դրամ:

Համայնքապետարանի աշխատակիցների բնականոն աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել գույք և տեխնիկա, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 3 500,0 հազար դրամ գումար:

Համայնքի մի շարք բնակավայրերում անհրաժեշտ է տեղադրել 40 հատ նոր փայտյա նստարաններ, 120 հատ մեծ և 30 հատ փոքր մետաղյա աղբամաններ: Նշված ապրանքների ձեռք բերման համար անհրաժեշտ է 28 300,0 հազար դրամ:

Ղուկասավան բնակավայրի կենտրոնական այգում տեղադրվել է նոր զրուցարան, որը կահավորելու համար անհրաժեշտ է ձեռք բերել և տեղադրել 4 հատ փայտյա նստարան և 2 հատ սեղան, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 195,0 հազար դրամ:

Մասիս համայնքում գործող թվով 4 երաժշտական դպրոցները գործիքներով համալրելու համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 7 000,0 հազար դրամ:

Համայնքի Սիս, Ռանչպար և Նորաբաց բնակավայրերում մինի ֆուտբոլի դաշտերի և մարզահրապարակների կառուցման նպատակով կազմակերպվել է բետոնապատման աշխատանքների ձեռք բերման գնման ընթացակարգ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 10 011,6 հազար դրամ:

Մասիս համայնքի մի շարք բնակավայրերում, ինչպես նաև քաղաքի շենքերի բակերում և կենտրոնական հրապարակի այգում առկա են խաղահրապարակներ, որոնք անհրաժեշտ է վերանորոգել և վերազինել նոր խաղային ատրակցիոններով: Նշված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է ձեռք բերել պարզ փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 880,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Եկամուտներ	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր
				Եկամուտներ				
1				**Այլ եկամուտ** /ընթացիկ դրամաշնորհ/		1 341,6		
				Ծախսեր				
2	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Համակարգչային ծառայություններ	4232		920,0	
3				Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն	4233		1 000,0	
4				Մասնագիտական ծառայություն	4241		1 000,0	
5				Վարչական սարքավորումներ. գույքի ձեռք բերում	5122			3 500,0
6	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239		-7 920,0	

7				Տրանսպորտային սարքավորումներ	5121			12 000,0
8				Վարչական սարքավորումներ	5122			-53 305,0
9				Այլ սարք սարքավորումներ	5129			1 430,0
10	05	6	1	**Շրջակա միջավայրի պաշտպանություն.** Սուբսիդիա «Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ին	4511		5 000,0	
11	06	2	1	**Համայնքային զարգացում.** Սիս, Ռանչպար և Նորաբաց բն. մինի ֆուտբոլի դաշտերի և մարզահրապարակների կառուցման բետոնապատման աշխատանքներ	5112			10 011,6
12				Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			-10 011,6
13	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Ղուկասավան բն. կենտրոնական այգու զրուցարանի համար նստարաններ և սեղաններ	5122			195,0
14				Մեծ աղբամաններ	5122			24 600,0
15				Փոքր աղբամաններ	5122			900,0
16				Նստարաններ	5122			2 800,0
17				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Մասիս համայնքի խաղահրապարակների և խաղային ատրակցիոնների վերանորոգման	5134			800,0
18				փորձաքննություն	5134			80,0
19	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Սուբսիդիա	4511		1 341,6	
20	09	5	1	**Արտադպրոցական դաստիարակություն.** Երաժշտական գործիքների ձեռք բերում	5129			7 000,0
				Ընդամենը		***1 341,6***	***1 341,6***	***0,0***

Բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կավելանան 1 341 600 դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ